ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» 2016 թվականի սեպտեմբերի 29-ի ՀՕ-27-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 3. Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական վճարի դրույքաչափերը

1. Հատուկ հատկացված տեղերում՝ թափոնների տեղաբաշխման տեղերում, պոլիգոններում, թափոնակուտակիչներում, աղբավայրերում, համալիրներում և (կամ) շինություններում, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու կամ պահելու համար բնապահպանական վճարը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	**Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում տեղադրված յուրաքանչյուր տոննայի համար (ՀՀ դրամ)**
առաջին դասի վտանգավորության թափոններ	48 000
երկրորդ դասի վտանգավորության թափոններ	24 000
երրորդ դասի վտանգավորության թափոններ	4 800
չորրորդ դասի վտանգավորության թափոններ	1 500
ոչ վտանգավոր թափոններ (բացառությամբ հողածածկույթի քանդման ու շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների)	600
հողածածկույթի քանդման և շինարարության հետևանքով	60

առաջացած ոչ վտանգավոր թափոններ	

2. Հատուկ հատկացված տեղերում՝ արդյունաբերական հրապարակներում, արտադրության և (կամ) սպառման թափոնների (բացառությամբ ընդերքօգտագործման թափոնների) տեղադրման կամ պահման համար բնապահպանական վճարը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

Արտադրության և (կամ) սպառման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	**Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (ՀՀ դրամ)**
Առաջին դասի վտանգավորության թափոններ	48 000
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	24 000
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	4 800
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	1 500
Ոչ վտանգավոր թափոններ	600

3. Հատուկ հատկացված տեղերում՝ պոչամբարներում, արտադրական լցակույտերի, մակաբացման ապարների տեղամասերում և (կամ) համանման վայրերում, ընդերքօգտագործման թափոնների մեկանգամյա տեղադրման կամ պահման համար բնապահպանական վճարը հաշվարկվում է հետևյալ դրույքաչափերով.

1) ոչ մետաղական պինդ օգտակար հանածոների հանքավայրերի համար.

Ընդերքօգտագործման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	**Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (ՀՀ դրամ)**
Առաջին դասի վտանգավորության թափոններ	62 400
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	31 200
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	6 240
Չորրորդ դասի վտանգավորության	1 950

թափոններ	
Ոչ վտանգավոր թափոններ (այդ թվում՝ մակաբացման ապարներ)	780

2) մետաղական օգտակար հանածոների հանքավայրերի համար.

Ընդերքօգտագործման թափոններ՝ ըստ վտանգավորության դասի	**Դրույքաչափը՝ հաշվետու ժամանակաշրջանում պահված յուրաքանչյուր տոննայի համար (ՀՀ դրամ)**
Առաջին դասի վտանգավորության թափոններ	250
Երկրորդ դասի վտանգավորության թափոններ	120
Երրորդ դասի վտանգավորության թափոններ	25
Չորրորդ դասի վտանգավորության թափոններ	8
Ոչ վտանգավոր թափոններ (այդ թվում՝ մակաբացման ապարներ)	3

»:

Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները հատուկ հատկացված տեղերում տեղադրելու կամ պահելու համար վճարի հաշվարկման կարգը

1. Հատուկ հատկացված տեղերում ընդերքօգտագործման, արտադրության և (կամ) սպառման թափոնները տեղադրելու կամ պահելու համար վճարը հաշվարկվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքին և սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված դրույքաչափերին համապատասխան:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**